

1891

## ԲԱԶՄԱՎԵՊ

ՀԱՇՎԻՆ Ա. Ռ. Ա. Վ.

ՀԱՅՈՐ ԽԹ ՀԱԿՏԵՄԲԵՐ

## ՀԱՅԿԱԿԱՆՔ

ՈՒՐՈՒԱԳԻԾՊԱՏՄՈՒԹԵԱՆ  
ԹԷՌՈՒՍԻԱ-ԿԱՅԱ ՔԱՂԱՔԻՆ ՏԱՒՐԻՈՅ  
ԵՒ ՀԱՅՈՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ



## ԳԵՆՈՒԱՑԻՔ Ի ԿԱՓԱ

(Տես յէջ 130)



ԱՅՑՆԻ է մեզ ի պատմութենէ որ՝ գենուացիք ԺԳ. դարէ սկսեալ մեծ գեր խաղացել են կաֆայի մէջ, այլ սույզ չէ որ թուականին նոցա ի ցամաք իջնալը ի թէող ոսիս, և ոտից կռուան հաստատելը քաղաքիս մէջ. սակայն զիտեմք որ թաթարաց իշխանութեան միջոց առաջին անդամ ասս ի ցամաք ելած են գենուացիք: Հաւանելի կը թուի մեզ հնագէտ իւրգեւիչ պրոֆեսուրին կարծիքը, որ կ'ենթագրէ թէ ի կաֆա, 1204ին, յետ առման կ. Պօլսոյ ի Լատինաց եկած են խաչակիր իտալացի ասպետք, որոց մին R. (Ռ) սկզբնանուն կրած է. վասըն զի նոյն պրոֆեսուրին խուզարկութեամբ յերեան ելած մի յի-

շատակարան կը հաւասառէ որ ի սկիզբն ԺԳ դարու Ռանանով իշխան մի ի կաֆա, արտօնութիւն կը չնորհէ տաւրիացի քաղաքաց մէջ անմաքս վաճառականութիւն անելու: Այլ այդ իշխանը յայտնի չէ որ քաղաքէն լինիլը՝ Վենետիկեցի<sup>o</sup> է արգեօք թէ գենուացի: զի այդ քաղաքացեաց նաւերն, անխատիր նոյն միջոցներն Սև ծովոն քաղաքներուն մօտ գեգերել են:

Այլ ի վերջին կէս ԺԳ դարու, Օրան-Դէմիր Թաթարաց խանին իշխանութեան միջոց, գենուացիք օրինաւոր պայմանագրով կաֆա քաղաքը, հանգերձ իւր շահեկան ծովածոցով, իրենց կառավարութեան կեդրոնավայր կը ստանան. և այս է համառօտութիւն նոցա պայմանագրին ընդ Օրան-Դէմիրի: Ա. Գենուացիք կը պարտաւորին վճարել խանին մաքս ի կաֆա մտած և ելած ապրանքներէն: Բ. Խանը կը պարտաւորի Գենուացւոց շտեմարաններ և տներ շինելու համար բաժնել տալ երկիր, զոր նորա պարսպելով կարնան ապահովել իրենց ապրանքը: Գ. Ամէն աղդաց նաւերու դիմաց բաց և անարգել թողուլ կաֆայի նաւահանդիսուր, Գենուացւոց հեռաւոր աշխարհներէ բերած ապրանքը դուրս հանելու համար:

Պ. Մուրզաքեւիչ « Գենուացի գաղթականութիւնք ի Ղրիմ » գրուածքին մէջ կը հաստատէ որ՝ « Թաթար խանք, ինքեանք հրաւիրեցին օտար ազգերը, շէնցնելու Ղրիմու աւերակ քաղաքները. այն միջոցներուն Գենուացւոց հետ Փիզացի և Վենետիկեցի վաճառականք ունէին իրենց նաւերը Սև ծովուն վերայ. այլ Գենուացւոց քան զմիւնները առաւել յօժարակամի Ղրիմ դիմելուն պատճառը, անշուշտ դարուս սկիզբը, ի կաֆա ցամաք ենող ասպետք լինելու են, որք կարողացել են գնահատել երկրին շահեկանութիւնը »: Վերե ի մէջ բերած պայմանագրիս համառօտութիւնը, կը լինի ամուր խարիսխ, որոյ վերայ կը բարգաւաճի տակաւ Գենուացւոց ի կաֆա և ի Սոլդայա մեծամեծ վաճառաշահութիւնը:

Շատ երկար կը լինէր եթէ աստ մանրամասն դրելու լինէինք Գենուացւոց 200 տարուան միջոց, աստ ի Ղրիմ, անցուցած շահավաճառ և գործունեայ կենաց պատմութիւնը, որ և գուրսէ մեր նպատակէն: Նոցա գործունեայ կենաց յիշատակարանները, ցարդ՝ 500 տարին անցնելէն յետոյ, կանգուն կեցել են ի Սոլդայա և ի կաֆա, վկայելով անբարբառ զիրենք շինողաց մեծադործութեան:

Պատմութիւնը կը վկայէ որ՝ Գենուացիք այն երկերիւր տարուան միջոցին, մէկ կողմանէ ամրակուռ բերդեր շինել են, հեռաւոր արենելքէ բերած ապրանքնին ապահովելու համար, միւս կողմանէ անդադար յետ մղել են այն բերդերուն վերայ յարձա-

կող թշնամիքը : Զի նոցա վերայ միշտ նախանձու աչօք նայել են , տիրող և գրացի ազգերը , որք հուսկ յետոյ հասած են իրենց վախճանին կործանելով և աւերելով երկու գենուացի ծովահայեաց և գեղեցկադիր քաղաքները՝ Սոլդայա և Կաֆա , որոց բարօրութիւնը , գենուացւոց կառավարութեան ժամանակ ծաղկեալ և նախանձելի եղած է :

Այլ մեք խօսիմք գենուացւոց աջակից Անեցի Հայկազանց վերաց , որ և է նպատակ մեր այս գրութեան :



## ԱՆԵՑԻ ՀԱՅԿԱԶՈՒՆՔ Ի ՏԱԿԻՐԻԱ.

Խնդրովս՝ թէ երբ արդեօք Հայկազունք անցել են ի Տաւրիա , ազգային հեղինակներէ առաջ , պարապել են օտարք :

Նախընթաց գարուս վերջերը թերակզզիս մարզ լինելով Ռուսաց պետութեան , կայսրուհին կատարինէ թ . նման Արշակունուոյն վաղարշակաց , կը ցանկայ գիտել նոր նուաճած աշխարհին և նորա մէջ բնակող ազգաց պատմութիւնը , կամ ըստ բացատրութեան խորենացւոյ , « կամ եղի գիտել սորա ( կատարինեայ ) թէ ոյք և որպիսի՝ արք տիրեալ են ի վերայ աշխարհիս , . . . զքաջաց արդեօք , եթէ զվատաց անցեալ ունիցի զտեղի » : Մար Արա կատինայ պաշտօնը կատարող կը հանդիսանայ Սեստրենցեւիչ Բոգուշ անունով համօրէն կաթոլիկաց մետրապոլիտը , այր ուշիմ և վարժ , լեհ ազգաւ , որ կը գրէ Տաւրիոյ պատմութիւնը փրանկ լեզուաւ , քաղելով մեծաւ մասամբ Բըրնեսկի լեհ հեղինակին « Թաթարաց պատմութենէն » . յորում Բագուներու և իւղը բէդներու քաջագործութեանց հետ կը յաւելու և նուաճեալ կամի Տաւրիա բնակող զանազան ազգաց պատմութիւնը : Սորա գրածը մինչև ցյետին ժամանակներս ազրիւր հաւատարիմ պատմութեան Տաւրիոյ համարուած էր . այլ որովհեաւ հապճեալ գրուածք է , վասըն որոյ կը պակասին ինման հետազոտութիւնք : Սրբազան Յովսէփ երկայնաբազուկ Արզութեանց ոռւսարնակ Հայոց մետրապոլիտն ևս ձեռք զարկած է գործոյս , եթէ ոչ բովանդակ Տաւրիոյ պատմութեան , այլ տաւրիաբնակ Հայկազանց մասին գրելու , որոյ բազմապատիկ զբազանքը չեն թողուցել գլխաւորելու սկսածք : Սեստրենցեւիչ օգուտ քաղած է Արզութեանցի թողած , յետ մահու , յիշատակարաններէն . զի կը գրէ յիւրում պատմութեան թէ Հայք գաղթած են յԱնուոյ ի Դրիմ 1840ին , Անշուշտ սրբազանը

այն տեղեկութիւնը կամ Նախիջևանու յայսմաւուրքէն և կամ Սուրզաթի (Ս. Խաչ վանքի) քարաքանդակ յիշատակարանէն հանած է . այլ յիշած թուականին մէջ, 10ը տարուան տարբերութիւն կամ սխալ սպրդած է . զի յիշեալ ազգային յիշատակարանք ի 1330ին կը գրեն բիւրաւոր հայկազանց գաղթը ի Ղրիմ և ոչ 1340ին : Մեծարդոյ Փիլիպապոսի Բրիւն, բանասէր և հմտւ կաճառորդի Պետրբուրդի Գիտութեանց ակադեմիայի գրածը, մեր նպատակին յարմար և համաձայն գտնալով համառօտենով կը դնեմք ասու<sup>4</sup> : « Գիտնոց մեծագոյն մասը, որը զբաղած են խընդրովս թէ՝ երբ արդեօք բնակութիւն հաստատել են Հայք Ղրիմու մէջ, ընդունած են ընդհանրապէս Մեսթրէնցեւիչի կարծիքը, հանեալի յիշատակարանաց, յետ մահուն, Երկայնաբազուկ Արզութեանց իշխան արքեպիսկոպոսի : Այդ յիշատակարանաց համեմատ, Թաթարք՝ նուաճելով զՀայաստան 1262ին, երկրին բնակչաց մեծագոյն մասը տարել բնակեցուցել են այժմեան Ղազանի Մժտերխանու գաւառաց մէջ, ուսկից նոքա անցել են ի Ղրիմ 1341ին համաձայնութեամբ գենուացւոց, ի կաֆա և ի մերձակայս Սուտաղի» :

Առանց մերժելու, որ շատ Հայեր կարող եղած են անցնիլ ի Ռուսաստան, աշխարհին Մոնղոլաց լուծին տակ ընկնալէն վերջ, որք ասկա կտրելով անցնելով անապատները եկել են բնակութիւն հաստատելու Ղրիմու քաղաքաց մէջ . Մ. Խւրգեւիչ յայտնի կը բացատրէ որ՝ Հայոց գաղթականութիւնք եղած են այլեայլ ճանապարհներով, և արքեպիսկոպոսին ցուցուցած թուականէն շատ առաջ, այնպէս որ մեզի ուրիշ բան չինկնար, բայց եթէ հետեւիլ գիտնական հետազոտութեանց պատուական պրոֆեսորին . վասն զի սերտ կազ ունին նորա զրոյցքը խնդրոյս հետ որով այժմ զբացիմք :

Անդստին ի ԺԱ. դարէ, տարաբազգ ժողովուրդք Հայաստանի, որ մասամբ ընկճեալ էին ի Քրդաց, մնացեալ մասը, թէպէտ գեռ ևս անկախ յայլ իշխանութենէ, այլ արդէն սկսած էին լքանել իրենց հայրենիքը, մէկ կողմանէ պարտասեալ Մէլճուք Թրքաց յաճախակի յարձակմնաքից, միւս կողմանէ յոյն կայսերաց հարըստահարութենէն, որք միշտ պնդած են թէ այն աշխարհը իրենց պէտք է ենթարկուի :

1024, երբ Յովհաննէս Սենեքերիմ Վասպուրականի թագաւորութիւնը թողլով, իւր իշխանութիւնը Վասիլ Բ. Յունաց կայսեր ձեռքը, քաշուեցաւ ի կապագովիկիա, աշխարհին բնակիչքը

4. «Մանօթութիւնք պատմականիք և աեղագրականիք իտալացի գաղթականութեանց յաշխարհի կազարաց» . Պետրուրդ 1866:

շատ անգամ ստիպուեցան թողուլ լքանել իրենց ծննդական  
երկիրը :

Գրիգոր երէց՝ Հայոց ԺԲ գարու պատմագիրը, յայտնագէս կը  
մեղադրէ յոյները, պատմելով 1160ին հանդիպածը, ուր ի միջի  
այլոց կը յաւելու. « Յունաց կայսերը ոչ մի բան արած չեն քը-  
րիստոնէից աղասութեան համար, ընդ հակառակն իրենք պատ-  
ճառ եղած են, նոցա քաղաքներուն և գաւառներուն կործանման :  
Այդ իշխանապետաց շնորհիւ ահա հարկադրեցան Հայք լքանել  
իրենց հայրենիքը, անհաւատք զօրացան, և յաճախակի յարձակ-  
մամբ տիրեցին ամենայն կողմանց, սկզբան Արծնոյ, Մելիսինոյ  
և Սեբաստիոյ, մայրաքաղաքին Անոյ, ապա նոցա ջոկանները  
տարածեցին իրենց աշխարհակալութիւնը մինչև ցմերձակայս Կ .  
Պօլոյ ։ » :

Նախ և առաջ Հայք կը գաղթէին կայսրութեան ասիական գո-  
ւառաց մէջ, այլ սխալ է կարծելը որ Հայք ընդ միշտ այն տեղուանք  
մնացին. զի կրօնական հալածանք և տակաւ թրքաց յառաջ խա-  
ղալը ասիական գաւառաց մէջ, հարկաւ կը ստիպէին Հայոց փրն-  
տուել իրենց համար ապահով ապաստանարան Ցաւրիոյ յունական  
մասին մէջ և այլ հեռաւոր տեղուանք :

Ռայնալդի գրածին նայելով<sup>2</sup>, Դրիմեցի Հայկազունք ի վորք Ա-  
սիոյ եկած են. բաց աստի յաճախակի յարաբերութիւնք ասիական  
Սև ծովուն նաւահանգստից, Դրիմեցի նաւահանգստից հետ, ան-  
շոշտ իրենց կը քաշէին վաճառական Հայերը որք մինչեւ ցայսօր  
նշանաւոր են մեծ յարմարութեամբ ի տուրեասու :

Հուսկ յետոյ, Հայոց գոյութիւնը ի Առաջապ շատ առաջ է քան  
այն թուականը, զոր կը ցուցանէ մեզ Արգութեան սրբազնը Հա-  
յոց ի կաֆա բնակութիւն հաստատելու մասին. զի յոյն Յայտ-  
աւուրքի մի յիշաստակարան, որ արդէն շատ հեզ յիշուած է, կը հա-  
ւաստէ մեզ այդ իրողութիւնը :

Այդ յիշաստակարանին հեղինակը կ'աւանդէ որ՝ մինչդեռ 1292  
ին զատկական տօնը հանդիպած է ապրիլի 6ին, Հայք տօնած են  
ամսոյն 16ին ծռազատիկ :

Արդէն առաջուընէ շատ անգամ ունեցել են Յոյնք և Հայք մեծա-  
մեծ բանակուաք զատկական թուականի մասին. 1006ին նոյնագէս  
Յոյնք տօնած են Ա. Յարութեան տօնը ի 6 ապրիլի, մինչ Հայ տո-  
մարը յետաձգել է ի 13 նոյն ամսոյն : Այս պատճառաւ Մատթէոս  
Ուռհայեցի յանդիմանած է զՅոյները, որք իրենց յոխորտ յա-

1. Dulaquier, 1. C. P. 357.

2. Nec Armeni... qui a Saracenis suis pulsi sedibus in Taurica Chersoneso  
agebant etc. Annal. Eccles. a. a. 1318

մառութեամբ յառաջ տարել են Զատիկը , ի Ծաղկազարդի կիւրակէն , հակառակելով Քրիստոսի . « Զի աղանդ փիլիսոփայիցն հակառակամարտ է Հոգւոյն սրբոյ » :

Յոյն Յայսմառութիւն յիշատակարանէն այս կը հետեւի , որ ի Սուտաղ բնակելոց Հայկազանց թիւը շատուոր եղած պէտք է լինի , որպէս զի նոցա կարծեցեալ սխալմունքին վերայ ուշ դարձնեն միւս այլ որթոտքս քաղաքացիք : Թերեւս նոցա մոլորութեան միւս պատճառ ևս այս կը համարին զիրենք յանդիմանողք , զի նոքա մկան էին մերձենալ կաթոլիկ Հոռվմէական եկեղեցւոյն , ինչպէս արդէն նոցա եղբարք , որք ի վաղուց կը բնակէին կաֆայի մէջ : Վասն զի այն քաղաքին մէջ , ըստ կարգադրութեան (règlement) 1316ին հին հայ եկեղեցիք կային , յորոց մին խարխուլ վիճակի մէջ , թեմին արքեպիսկոպոսը յորում կը գտնուէր խարխուլ եկեղեցին արդէն ընդունած էր զգերազահութիւն որբազանին Հոռվմայ<sup>1</sup> :

Հաւանական է որ՝ Սոլդայա (Սուտաղ) ևս ունեցել է իւր Հայ – կաթոլիկ թեմակալ եպիսկոպոսը 1253ին , որոց մօտ հիւրընկալ մեծարանք վայելեր է փրանկ քարոզիչը Rubriques , զոր ինքը յոյն կը կարծէ . մեզ հաւանական չիթուիր , որ յոյն եկեղեցական մի իւր եկեղեցւոյն<sup>2</sup> մօտ բնակութիւն տայ փրանկ քարոզին :

Բազմահմուտն իւրգեւիչ և Փիլ . Բրիւն , վերը գրած փաստերով կը հաստատեն որ Հայք ԺԴ դարէն շատ առաջ բնակութիւն հաստատել են Տաւրիոյ մէջ :

Ինչպէս տեսանք՝ ԺԴ դարու ունեցել են թեմակալ եպիսկոպոսներ , և եթէ ԺԴ դարուն սկիզբները նոցա եկեղեցին խարխուլ է , անշուշտ այդ եկեղեցին պէտք է լինի մի քանի հարիւր տարուան չէնք . զի հայկական քարոզիչը շինուածք մի քանի տասնեակ տարիներու միջոց չեն խարխուր . վկայ են զրուցածիս այժմ Ղրիմուսարերուն վերայ , հարիւր տարիէն աւելի անտէրունչ մնացած . դեռ ևս կանգուն Հայ եկեղեցիք :

Հայոց ի վաղուց գոյութեան ի Տաւրիա մի փաստ կարող է համարուիլ , կաֆայէ ոչ շատ հեռի , Սուրբաթ քաղաքին մերձաւոր անտառին մէջ դեռ ևս կանգուն Ա . Խաչ վանքը (ի հնումն Ա . Նշան , դեռ ևս առաջ Գամշակ կամ Քէմչակ անապատ ) . թէպէտ և այդ վանքը իւր գեղեցիկ եկեղեցեաւ ԺԴ դարուն սկիզբները շինուած է (1330) , այլ աւանդութիւնը մեզ կ'ապահովցնէ , որ

1. Rainaldi , ad annum 1318. n. 13 ; 1321 , n. 13.

2. Այդ ԺԴ դարէն մնացեալ եկեղեցին նորոգեցաւ 1883ին , յորում այժմ Հայ կաթոլիկը կը պատարագեն :

այդ թուականէն շատ առաջ մի այլ վաղեմի հայկական վանք եղած է նոյն անտառին խորերը, որոյ հիմունքը ցարդ կեցել են:

Ըստ իմ կարծեաց, կաֆա քաղաքին միջավայր, գեռ կանգուն Ս. Սարդիս եկեղեցին, մեծ և զօրաւոր ապացոյց է Հայոց վաղեմի գոյութեան ի քաղաքիս. դա է այն աթոռակալ եկեղեցին՝ որոյ շուքին ներքե շատ բարեպաշտիկ արեղայներ և դպիներ օրինակել են զանազան հոգեոր գրեանք յընթացս հարիւրաւոր տարեաց: Այդ եկեղեցւոյն ետևի կողմէն, ընդ մէջ որմին ագուցիկ խաչքարինք, յայտնի վկայ են եկեղեցւոյն շատ հին լինելուն. քանզի մինչդեռ բազմաթիւ խաչքարինք ժդի դարէ ի խոնարհ, անաղարտ մնացել են, իրենց տառերով, Ս. Սարգսի որմին մէջ ագուցեալները՝ մաշած և աւրուած են և չէ կարելի կարդալ նոցա թուականը: Նոյն իսկ եկեղեցւոյն դիրքը ի միջավայր կաֆայի, նորավաղեմի լինելուն յայտնի ապացոյցն է. վասն զի այլ ազգային եկեղեցիք քաղաքին կեդրոնէն հեռու կ'ինկնան, և մեծաւ մասամբ այժմեան արգելանոցին մէջը և մօտերը, ուր և առանձին թաղ կազմելով, բնակութիւն հաստատել են հայկազունք, որք 1330ին բազմութեամբ եկած են ի կաֆա գենուացի իշխանաց համաձայնութեամբ: Այսպէս կը գրէ Ղրիմեցի մի Յայսմաւուրքի յիշատակարանը, « Դեսպան յղեն (Հայք) ի Ղոփմ առ իշխանն Զինիւրդաց, որ բնակէր ի մէջ Ֆուանկհիսարին Ֆէօդօսիու. ուխտ դնեն ընդ իշխանին Ֆէօդօսիու: Ելեալ ի յԱխսարայէ իշխանք և ազնիւք և հասարակ ժողովուրդք, վառեալք զինու, պատերազմերով ընդթաթարացն, ճեխքեալ գան ի Ղոփմ. և բնակին ի Ֆէօդօսիա, ի կազարաթ, և ի Սուրխաթ և ի կողմանս սոցա. այս եղեւ ԶՀԹ թուին » :

Հայոց բնակութեան տեղ կը տրուի Ֆռէնկ հիսարէն դուրս դէպ ի հարաւային սարերը, զոր պարսպով պատելով ազգայինք, հոն բնակութիւն կը հաստատեն. Յիշեալ յիշատակարանը կը զրուցէ « Յահէ Հոնականաց (փոխանակ թաթարաց գրելու) պարսպեցին ի քաղաքն Ֆէօդօսիա »: Ահա այս պարսպին մէջ շինուած են մեծաւ մասամբ բազմութիւ հայ եկեղեցիք կամ մատրունք. սակաւ են պարապէս դուրս մնացեալները, իսկ ի միջավայր քաղաքին միայն Ս. Սարդիս ոնեցել է տեղի: Քաղաքիս և ապա ի նմամեր ազգայնոց բոնած գրքէն կը հետևեցընեմք, որ Ս. Սարգսի շինութիւնը, շատ առաջ է քան զվերջին գաղթականութիւնը. եկեղեցւոյ որմին մէջ զետեղուած աւրուած և մաշած խաչքարինք կը հաստատեն եկեղեցւոյն բազմադարեան հնութիւնը, թերևս գենուացւոց ի կաֆա գալէն և շատ առաջ: Սակայն ոմաննք կարող են առարկել, թէ ի՞նչպէս այդ բազմադարեան եկեղեցին, ԽըՓ-

շաղաց և թաթարաց յարձակմանց միջոց, քանդողաց աչքէն վրիպել է, մինչդեռ իրմէ շատ վերջ շինուած գենուացւոց Ա. Ազնէս փառաւոր եկեղեցին, որ քիչ հեռի եղած է Ա. Սարգսէ, և այլ շատ ազգային եկեղեցիք քարուքանդ եղել են:

Մեք այդոր պատճառ Ա. Սարգսի խոնարհ անշոք գիրքը կը համարիմք. որ քաղաքին միջավայրն լինելովը հանդերձ, աչքի չի զարներ: Նորա ցածուն և անշուք դիրքը և չորս կողմի բարձր պատերը, ծածկել են զնա քանդիչ ձեռքերէ: Արդեօք մեր նախնիք կանխատես զգուշութեամբ չեն տուել Ա. Սարգսի այդ ցածուն դիրքը. ես այնպէս համազուած եմ, որ հին Հայոցխոհական զգուշութեան արգասիքն է ցարդ Ա. Սարգսի կանգուն մնալը: Վերջին և զօրաւոր ապացոյց մեր ազգայնոց Ժ գարու միջոցներ ի կաֆա գոյութիւն ունեցնալինուն, կը համարինք մի քար, որ համայնալինջ ամանակին ժանիքէն պրծեալ, կը պահուի ցարդ Թէոդոսիոյ հընութեանց թանգարանին մէջ: Քառածալ թերթի ձեռվ, յասպիս քար մի է, վրած երեք խաչեր քանդակուած. միջինը մեծագոյն, որոյ պատուանդանին վերայ կը կարգանք. «Բարեխաւս է սուրբ Նշանքս Գրիգորին և իւր զաւակին»: Խաչին վերի կողմը կայ քանդակուած այս վաղեմի թուականը ՆՀԶ (1027):

Վ. Հ. Մինաս Բժշկեան, հաւատարիմտեղագրուցն հայկազն յիշատակարանաց Տաւրիոյ, կը զրուցէ թէ, « Թուի թէ զայս վէմ բերեալ են աստ ( Հայք ) յԱնուոյ և եղեալ յեկեղեցի ինչ »: Թուի կը զրուցէ՝ տարակուսելով խաչքարին հնութեան վերայ. վասն զի նոյն միջոցին գեռ ևս իրեն ծանօթ չէին ոչ ԺԳ դարու բազմաթիւ Հայոց գոյութիւնը ի Սուտաղ, և ոչ այլ նորանոր հետազօտութիւնք գիտնոց, Հայոց հին գաղթականութեանց մասին ի Տաւրիա: Հաւանական է ինչպէս այս քարին, նոյնպէս և այլ շատ քարերու Զ. Պ. Ջ և այլն, թուականներով ի կաֆա փորագրեալ լինելը :

Քանդի նոյն ինքն Բժշկեան վարդապետ, յեցեալ հաւատարիմ յիշատակարանաց վերայ, ինչպէս կոնդակին Գրիգորի ԺԲ քահանայապետին Հովգմայ առ Հայկազունս Տաւրիոյ (1318), որ 13 ամգը առաջէ քան զմեծ գաղթականութիւն բիւրաւորաց ազգիս ի Տաւրիա, կը գրէ. « Զայնու ժամանակա ( 1318 ), մեծանուն հանգիւսցաւ ազգս մեր, ոչ միայն ի Ղրիմ, այլ և ի բազում տեղիս »: մեք թողլով առ այժմ՝ ազգիս մեծանուն հանգիւսանալը ի բազում տեղիս, յոյժ հաւանական կը համարիմք որ ի Ժ դարէ և այսր միշտ հայկազունք բնակել են Տաւրիոյ զանազան քաղաքաց մէջ:

Շարունակելի